

## ԹԱՂՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳԸ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԶՎԱՐՃԱՊԱՏՈՒՄ-ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ԴՐԵՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Բանասիրական գիրովայունների թեկնածու, դոցենտ,  
ԳՊՀ դասախոս  
e-mail: Igreyan@yandex.ru

**Ընդունեկան ծիսական համակարգում ուրույն գրեղաված մահվան և հուղարկավորության ծեսը, որն աչքի է ընկնում հինավորց սովորույթների պահպանմամբ, բռվանդակում է հայ մարդու կյանքի, կենցաղի, սովորույթների ու պատկերացումների բազմաթիվ ինքնապիս դարրեր:**

Գավառում այն որոշ չափով դարրերկում է ազգային ավանդական ընդունված ծիսակարգից (ճոխ և առաւր հոգեհաց գերեզմանոցում, թաղման հաջորդ օրը միսիթարանքի կազմակերպում, որոշ գյուղերում յոթից հետո խաշ մարդու կամ կանաչ կազմակերպում և այլն):

Ժամանակի ընթացքում փոխվում է ժողովրդի աշխարհայացքը, դրեղի են ունենում դրնդեսական, քաղաքական-հասարակական դրեղաշարժեր, որոնց հետևանքով փոխվում են այս ծիսակարգի արարողությունների բնույթն ու դրանք, սակայն պահպանվում են դրանց բռվանդակությունն ու նշանակությունը:

Եվ անկախ ամեն ինչից՝ ժողովրդի սպեղծագործ միտքը, արձագանքելով զանազան իրավիճակների, շարունակում է սպեղծել նոր զվարճապարում- զվարճախոսություններ:

**Մեր նպատակն է ներկայացնել թաղման ծիսակարգը Գավառի դարածաշրջանում և այդ արարողակարգի որոշ դարրերի արդացոլումը զվարճապարում-զվարճախոսություններում:**

**Բանալի բառեր՝** Գավառի դարածաշրջան, թաղման ծիսակարգ, հուղարկավորություն, մեռելոց, պատրանք, ննջեցյալ, զվարճապարում, զվարճախոսություն:

Ազգային ավանդությունների և ընտանեկան ծիսական համակարգում հատուկ տեղ է գրավում մահվան և հուղարկավորության ծեսը, որն աչքի է ընկնում սովորույթների խիստ պահպանմամբ և ընդգրկում է մարդու կյանքի, կենցաղի, սովորույթների ու պատկերացումների բազմաթիվ ինքնատիպ տարրեր:

Գալով հազարամյակների խորքից՝ հասարակական, քաղաքական ու տնտեսական մեծ տեղաշարժերի հետևանքով այն ենթարկվել է բազմապիսի փոփոխությունների՝ բոլոր ժամանակներում էլ համապատասխանելով ժողովրդի աշխարհայացքին, ըմբռնումներին, սովորույթներին, երբեք չկորցնելով իր դերն ու ազդե-

ցությունը մարդկային կյանքի, հոգեբանության, կենսակերպի ու մտածելակերպի վրա:

Պատմական Հայաստանի տարածքում կան մշակութային տարրեր դարաշրջաններից վկայված թաղման բազմաթիվ ձևեր (սովորական գետնափոսեր, դամբարան հողաթմբեր, քարարկղեր, կարասային, հիմնահողային, կավե ու փայտե դագաղային և այլն)՝ ուղեկցվող դամբարանային տարրեր առարկաներով (գենք, ուտեստ, կահկարասի, զրիաբերված մարդկանց ու տարրեր կենդանիների կմախքներ), որոնք վկայում են հնագույն ժամանակներից ի վեր թաղման տարրեր ծիսական արարողությունների և հանդերձյալ կյանքի հավատալիքների գոյության մասին (հմմտ. Հարությունյան, 2001, 19):

Հուղարկավորության և մեռելցներին ուղեկցող սովորությունների ու ծեսի հիմնական խնդիրն է սիրաշահել ու գրիացնել հանգույցյալի հոգին, որպեսզի անմահ հոգին դժգոհ չմնա ու վրեժինդիր չլինի, և բացի դրանից՝ մերձավորն իր հոգու և խոճի պարտքն է համարում ննջեցյալի համար անել հնարավոր ամեն ինչ:

Ավանդապաշտ գավառցիների (իմա՝ նորբայազետցիների) ընտանեկան կյանքում խստորեն պահպանվում են բազմաթիվ նահապետական ավանդույթներ, որոնց շարքում առանձնակի տեղ է գրավել ու գրավում մահվան և հողարկավորության ծիսակարգը, որն ինչ-որ չափով տարրերվում է ազգային ավանդական ընդունված ծիսակարգից<sup>1</sup>:

Ծանր հիվանդությամբ տառապող և մահվան մահնում գտնվող մարդուն ինչպես հայոց ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Գավառում ու նրա տարածաշրջանում, շրջապատել են մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ: Հարազատները ջանացել են ամեն կերպ բավարարել հիվանդի բոլոր ցանկությունները, որոնք գուցեն վերջինն են լինելու: Եվ երբ տանը նման հիվանդ էր լինում, նորբայազետցիները մեծ մասամբ դիմում էին սրբերին, գուշակներին և զանազան հմայական միջոցների:

Քահանան հարազատների խնդրանքով որևէ սրբի մասունք էր բերում, որ հիվանդը համբուրեր, բժշկության Ավետարան էր կարդում հիվանդի գլխավերևում: Հիվանդին տանում էին որևէ «սրբի դուռ», գառ էին մատաղ անում, շրերից մի կտոր կտրում և կապում էին սուրբ համարվող ծառից, որ հիվանդությունն անցնի ծառին (ի դեպ, այս սովորությունը գոյատևում է մինչ օրս), նոյն նպատակով շապիկը մի աղքատի էին տալիս: Կային քահանաներ ու տիրացուներ, որոնք «գիր էին անում»՝ հիվանդին առողջացնելու համար: Բացի դրանից՝ նման հիվանդների մասին նաև գուշակություններ են արել: Այսպես, եթե բուն կանչի, ագրավը կռու, հավն աքաղաղի պես կանչի, հիվանդը կմեռնի: Իմանալու համար, թե հիվանդն

<sup>1</sup>Սոյն հողվածի հիմքում ընկած են մեր կողմից Գավառի տարածաշրջանից հավաքված դաշտային ազգագրական և բանակյուսական նյութերը /այսուհետ՝ ԴԱԲՆ/: Որոշ տվյալներ էլ բաղել ենք «Ազգագրական հանդեսի» XVI գրքից (Նոր - Բայազետի գավառ կամ Գեղարքունիք):

առողջանալու է, նրան ջոկ էին տալիս խմելու, ջրի մնացած մասը սրսկում էին որևէ կենդանու, հատկապես շան վրա: Եթե շոնը սատկում էր, նշանակում էր հիվանդը շուտով կմեռնի: Հիվանդի անխուսափելի վախճանը նորրայազետցիները և՝ հնում, և՝ ներկայումս գուշակել են նաև նրա վարքագծով ու դիմագծերի փոփոխությամբ՝ տագնապայի հայցքով, շարունակ տեղից տեղ փոխվելով (նշանակում է՝ մահվան հրեշտակը երևում է նրան), երազում մահացածներին տեսներվ, զառանցանքի մեջ մահացածների անուններ տալով (նշանակում է՝ ննջեցյալները նրան կանչում են), քիթը քրոելով և տրորելով (նշանակում է՝ հոգին դուրս է գալիս): Մոտալուտ մահվան նշան է համարվում նաև քիթ բարակել-երկարել, աչքերի փայլի կորչելը կամ խամրելը, ոռնգերի անբնական լայնացումը, մարմնի բարակել-ձգվելը (ԴԱԲՆ):

Հիվանդի՝ որևէ մեկին տեսնելու ցանկությունն անմիջապես կատարվում է, իսկ եթե հեռու է այդ անձը, կամ նրա իրերից են բերում, դնում կրծքին, կամ լուսանկարը՝ բարձի տակ, որ հիվանդը «կարուն առնի» և հանգիստ մեռնի: Հարազատները զսպել են իրենց լացն ու կոծը, որպեսզի մահամերձը հոգեղարձ չլինի: Ըստ հավատալիքի, ծանր ու երկարատև հոգեվարք ապրում են «մեղավոր» հոգու տեր մարդիկ, որոնց հոգին տանում է չար իրեշտակը՝ «գրողի գզրի» ուղեկցությամբ («Ազգագրական հանդես», 1907, 58): Մահը վրա հասնելուց հետո սկսվում է լացն ու կոծը: Մինչ օրս տարածված է այն հավատալիքը, որ եթե հանգույցյալի աչքերը բաց են մնում, նշանակում է, թե աշխարհից դեռ չի կշտացել, իսկ եթե կիսաբաց են, ուրեմն «ճանապարհ է պահում», այսինքն՝ սպասում է հեռվոր գտնվող հարազատին, պանդոկսիտին: Եթե մահացածի մարմինը ձգված չէ, այլ մի տեսակ «փափուկ է», նշանակում է՝ «հետևկից մեկին տանելու է» (ԴԱԲՆ):

Թաղման ծիսակարգի պարտադիր տարրերից մեկն էլ հանգույցյալին լողացնելն էր: Հանգույցյալն լողացրել են տախտակների վրա, քահանայի կողմից օրինած սառը ջրով, որտեղից էլ եկել են «ջանդակըդ տախտըկներին լրվամ», «ջանդակըդ տախտըկներին տրվեն» անձեռները: Այն սրահում կամ սենյակում, որտեղ լողացրել են ննջեցյալն, յոթ օր ճրագ են վառել, որովհետև հավատացել են, որ իրեշտակը յոթ օր շարունակ այդ նույն տեղում պահապանի դեր է կատարում: Տղամարդուն լողացրել է տղամարդը, կնոջը՝ կինը, ովքեր տեղական բարբառով կոչվել են «մեռել լուսկըցըռողներ»: Լողացնելուց հետո ավելացված ջրով ոտքերը լվանում էին նաև այդ պահին տանը քնած անդամները, որպեսզի «խրեշտակակորհ» չլինեն: «Եթե կար հիվանդ կամ վախեցած մեկը, ապա նրան մեռելին լողացրած ջրից էին խմենում: Վախկոտներին էլ խորհուրդ էին տալիս մեռած մարդու ձեռքի կամ ոտքի մատը կամ էլ քիթը կծել, որպեսզի սրտոտեն, չվախենան», - նշում է բանասաց Համեստ Գևորգյանը:

Ննջեցյալին պատանքել են, պատանքի կտորից քահանան մի գոտի ու վարշամակ է պատրաստել, որ դրել են հանգույցյալի երեսին, իսկ գոտին, որ «ըլքը» էր կոչվում, կապել են մեջքին:

Քաղաքում ննջեցյալին հուղարկավորել են դագաղով, իսկ գյուղերում դրել են հասարակական նաշի մեջ:

Մինչև անցյալ դարի առաջին կեսերը ժողովորդի մեջ ընդունված է եղել «ժամի դագաղ» (նաշ) հասկացությունը, որով հուղարկավորել են չունարդներին: Սակայն եղել են նաև ունարդներ, ովքեր ևս իրենց հարազատներին հուղարկավորել են «ժամի դագաղով», ինչի համար նրանց հետագայում քննադատել են իրեն ժլատների՝ պարբերաբար հիշեցնելով այդ փաստը (ԴԱԲՆ):

Թերով չափել են ննջեցյալի հասակը, որպեսզի դագաղ պատվիրեն: Հավատում էին, որ եթե դագաղը մեծ լինի, տնից էլի մեկը կմնանի: Խուսափում էին առողջ մարդու հասակը թելով չափելուց: Այս հավատալիքին է առնչվում «բոյըդ թելով չափեմ» անեծքը: Նախկինում դիակը մեկ օրից ավել չեն պահել տանը, այն դրվում էր եկեղեցում: Այժմ պահում են երկուահց երեք օր, մինչև հանգույցյալի հարազատները հեռու տեղից գան և հրաժեշտ տան: Մեր օրերում Գավառում և նրա տարածաշրջանում դիակը եկեղեցում դնելը այնքան էլ ընդունված չէ: Ներկայումս դիակը դնում են մի սենյակում, որտեղ նստում են միայն տղամարդիկ, իսկ սգավոր կանայք նստում են այլ սենյակում: Ժամանակ առ ժամանակ՝ հատկապես հոգեհանգստի ընդունված ժամին, երբ հրավիրվում է քահանան, կամ ներկայանում են երաժիշտները, կանայք գնում են հանգույցյալի դիակի մոտ, լաց լինում, հետո վերադառնում:

Նախկինում կանայք չեն մասնակցել եկեղեցում առավոտյան մատուցվող պատարագին ու հուղարկավորությանը: Եկեղեցին հուղարկավորության սկիզբը ազդարել է զանգով, որին տեղացիներն անվանել են «մեռելի զանգ»: Գերեզմանոցի սահմանի մոտ հարթ քար է դրված եղել, որը կոչվել է «հանգատյան քար», որտեղ էլ կանայք վերջին անգամ հրաժեշտ են տվել հանգույցյալին: Այսօր կանայք ակտիվ մասնակցություն են ցուցաբերում թաղման բոլոր արարողություններին: Դեռևս տասնամյակներ առաջ հանգույցյալն միայն ձեռքով էին տանում գերեզմանց, այնուհետև՝ թերթ բեռնատար մեքենայով՝ հատուկ պատվանդանի վրա, իսկ այժմ հանգույցյալի համար նախատեսված հատուկ մեքենայով:

Մինչև վերջին ժամանակները գերեզմանատոն տանող ճանապարհի վրա գտնվող տներից մարդիկ դուրս են եկել, որպեսզի իրենց «ցավն ու չոռը» մեռելը հետը տանի: Շատ անգամ հիվանդները թելով չափել են իրենց հասակը և թելը դագաղի մեջ, որպեսզի իրենց «ցավն ու չոռը» թելի միջոցով փոխանցվի մեռելին: Այս հավատալիքը գոյատևում է մինչ օրս: Թաղումից հետո ներկաները ինչպես հնում, այնպես էլ մեր օրերում մտտենում են սգավորներին, սեղմում նրանց ձեռքը, միշտարում՝ ասելով. «Հոգին լուս դառնա», «Հողը թերթ լինի» և այլն, ապա գերեզմանոցում պատրաստված սեղանից մի քածակ օրի են խմում և բարեմաղթում. «Ետի դատաստանը քաղցր մընա»:

Գավառ քաղաքը մեր օրերում հայտնի է հոգեհացի ճոխ ու առատ սեղաններով: Ոչ հեռու անցյալում հոգեհացը կանոնակարգված է եղել, մատուցվել է բոզբաշ, փլավ,

խաշլամա, երբեմն ձուկ, իսկ պասին՝ պասուց կերակուր: Մեր օրերում Գավառում հոգեհացին մատուցում են խաշլամա, քոփթա, իշխան ձուկ և զանազան այլ ուտեսուներ: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում օղու որակին և առատությանը:

Դեռևս մեկ տասնամյակ առաջ Գավառում և նրա տարածաշրջանում տղամարդկանց համար հոգեհացի սեղանը դրվում էր գերեզմանոցում, իսկ կանանց համար՝ տանը: Ընդ որում՝ կանայք պետք է ավարտեին ճաշկերոյթը մինչև տղամարդկանց տուն դառնալը:

Արդեն մեկ տասնամյակ է, ինչ գերեզմանոցում սեղաններ բացելը և ճաշկերոյթ կազմակերպելն արգելվել է, և հոգեհացի արարողությունը սահմանափակվել է տնային պայմաններում կամ սրահներում<sup>1</sup>:

Նախկինում թաղման երկրորդ օրը քահանան գալիս էր՝ սգավորներին սգից հանելու: Տղամարդկանց դուրս էին հանում, սովորաբար տանում էին գինետուն, միմի բաժակ խմիչք հյուրասիրում բարեկամներից յուրաքանչյուրի հաշվին, օրինում ննջեցյալին, այնուհետև տղամարդիկ շարունակում էին իրենց սովորական կյանքը: Թաղման յոթերորդ օրը կատարվիմ էր «այք և օհստեք» (այգը և յոթը): Տարվա ընթացքում, հատկապես՝ մեռելոցի օրերին այցելում էին իին ու նոր ննջեցյալների գերեզմաններին: Տղամարդիկ պիտի քառասուն օր չսափրվեին, որովհետև մեռածի չարերը կամ իրեշտակները տան մեջ են, չսափրվածներին չին ճանաչում: Եթե սափրված լինեին, նրանց կճանաչեին ու կտանեին: Քառասունքի օրը հավաքվում, գնում էին գերեզմանոց, խոնկ ծխում, մի-մի բաժակ օղի էին խմում և հետ դառնում: Այդ օրվա երեկոյան կամ մյուս օրը բարեկամներից կամ ընկերներից «քափոր» էին դառնում, վարսավիր էին բերում ու սափրում սգավորներին (ԴԱԲՇ): Ի դեպ, քառասունք պահելը այս տարածաշրջանի որոշ գյուղերում դեռ պահպանվում է:

Այսօր Գավառում և Հացառատ թաղամասում թաղման հաջորդ օրը «միսիթարանքի օր» է: Ծանոթ-բարեկամները գալիս են՝ մեռելատիրոջը միսիթարելու: Տղամարդիկ, նստած սեղանի շուրջ, լսում և ընդունում են ցավակցողների միսիթարող խոսքերը: Դուռն մոտ երիտասարդ տարիքի մարդ է կանգնում այցելու տղամարդկանցից օգնության համար նախատեսված դրամը վերցնելու: Որոշ համայնքներում (Սարուխան, Կարմիրգյուղ, Նորատուս) այս երևույթը տեղի է ունենում թաղումից առաջ: Եվ ամբողջ գյուղն առանց սահմանափակման մասնակցում է այդ արարողակարգին: Տարածաշրջանի շատ համայնքներում (Նորատուս, Սարուխան, Լանջաղբյուղ, Գեղարքունիք, Հայրավանք) թաղման հաջորդ օրը կատարում են «այգ և յոթ»: Դա, իհարկե, կապված է թաղումից անմիջապես հետո սննդի չփչանալու և լրացուցիչ սնունդ գնելու համար հնարավորինս քիչ ծախսեր կատարելու հետ:

<sup>1</sup> Այնուամենայնիվ, այսօր էլ կան մարդիկ, ովեր իրենց սահմանափակ հնարավորությունների պատճառով (նյութական վիճակ, տնային անհարմար պայմաններ) հոգեհացը մատուցում են գերեզմանոցում:

Ակնհայտ է, որ Ներկայիս սոցիալական պայմաններում ժողովուրդը հեռացել է հոգևորից՝ կարևորելով միայն նյութականը:

Գավառ քաղաքում ու նրա տարածաշրջանի բոլոր համայնքներում թաղման ծիսակարգի մաս է կազմում «տասնինգի» անցկացումը (յոթի հաջորդ շաբաթ օրը), որն իր արարողակարգով և ճաշացանկերով ամենակին չի զիջում նախորդող (յոթ) և հաջորդող (քառասուն) օրերին:

Սակայն, ինչպես ասում է ժողովրդական ասացվածքը, «Մի աչքը լաց է լինում, մյուսը՝ ծիծաղում» կամ «Հարսնետունը առանց լաց չի լինի, // Մեռելատունն՝ առանց լինում»:

Ժողովուրդն անգամ ցավի ու վշտի մեջ պահպանում է իր կենսախնդրությունը, և կյանքի շարունակականության գաղափարախոսությունը նրա մեջ ժամանակ առ ժամանակ ծնում է տիրությունն ուրախ ելմէջներով փոխարինելու ծգոտում, և ստեղծվում են զվարճապատում-զվարճախոսություններ, որոնք վերաբերում են թաղման արարողակարգի մեջ մտնող բազմաթիվ տարրերի:

Գավառում և նրա տարածաշրջանում մեր կողմից գրառված զվարճապատում-զվարճախոսությունների գայի մասն ունի իրական հիմք, իսկ մի մասն էլ կազմում են անիրական հորինվածքները: Այսպես, իրականությունն արտացոլող մանրապատումներից մեկում ծիծաղի պատճառ է դառնում մահամերձի՝ ժամանակին արված տնտեսումներից գոյացած հարստության բացահայտումը: Տան բոլոր անդամները լարված սպասում են, թե ինչ պետք է ասի աղեն. «Կորուրը՝ ջոչ կազնի մեջ...», - նվազում է ձայնը: Մեծանում է տան անդամների լարվածությունը: «Կորուրը՝ ջոչ կազնի մեջ ի՞նչ, մա՛», - հարցնում են: «...Կորուրը՝ ջոչ կազնի մեջ, խնձորի չիր կա, կուրեր՝ ըրփրզանա», - ասում է պառավ կինը ու հոգին ավանդում:

Հիվանդի ցանկությունը՝ հատկապես մի քան խմելու կամ ուտելու, որը տեղացիների մեջ «կամակ» է կոչվում, կատարվում է անմիջապես և ամեն գնով:

1950-1960-ական թթ. Նոր Բայազետում և նրա տարածաշրջանում չկային պտղատու ծառեր, իսկ որևէ միրգ ծեռք բերելը մեծ խնդիր էր: Մինչդեռ հիվանդի սիրտը միշտ սառը ջուր, թթու բան և հատկապես խնձոր էր ուզում: Սակայն միշտ չէր, որ հաջորդում էր ժամանակին հասցնել մահամերձի ցանկությունը կատարել: Եվ հենց այս երևույթի հետ են կապված «Հիվանդին խնձոր հասցնել» և «Հիվանդի ծյունի երթալ» դարձվածքները, որի նշանակությունն է՝ անհետաձգելի հանձնարարություններ կատարելիս ուշանալ, դանդաղել (Բեդիրյան, 2011, 763):

Ցավուտ այս խնդիրը չէր կարող դուրս մնալ ժողովուրդի ուշադրությունից, ուստի այս առիթով ակամա հնչած ցանկացած պարզամիտ խոսք ներկաների կողմից զավեշտի է վերածվում դառնալով զվարճախոսություն: Այսպես, որդին շտապում է մահամերձ հորը խնձոր հասցնել: Մի կերպ մի քանի խնձոր է ծեռք բերում, դնում է տարատի գրապանը և շտապում տուն: Մինչև հասնում է, հայրը մահացած է լինում: Որդին, ծեռքը դնելով տարատի գրապանի խնձորների վրա, դառը ողբում է. «Խե՛ր ջան, մեթքա (մի քիչ) էլ համփերիր, էսա շըլվըրիս մըշինն ուպիր, նոր մեռնիր»:

Մահամերձի վերջին ցանկությունը կատարելու մասին զվարճապատումներից մեկն էլ կապվում է անհաշտ ամուսինների՝ Ամայիկի և Գրիշի հետ: Հոգեվարքի ժամանակ Ամայիկը կանչում է ամուսնու՝ Գրիշին և սպառնում:

- Իմ թաղման վախս (ժամանակ), որ հեղեփոյը էկեր ես, կը հըլնեմ էլու ժողովրդի դեմք, քեզի կանեմ խայրառակ:

Եվ հետաքրքիր է, որ Ամայիկի քառասունքի օրը Գրիշի հույարկավորությունն էր:

Մեր գրառումներում զգայի թիվ են կազմում նաև ննջեցյալի վրա լաց լինելու, որբալու հետ կապված զվարճապատումները, որոնք ևս մեծ մասամբ իրական իիմքի վրա են ատեղծված:

Կինը իր սիրելի ամուսնուն գովելիս նշում է նրա աշխատանքը, զբաղմունքը, արհեստը, և որ նրա մահով տուժում է նաև գործը՝ «չուստի կարելք», իսկ պատասխան տալը մնում է իր վրա:

Այսպես, փինաչի (կոշիկ վերանորոգող) Նիկոլ հանկարծամահ է լինում: Կինը՝ Արուսյակը, գովում է ամուսնուն.

- Իմ հըլու'կ (կան անկյունաքար) ջան, իմալ չխասցըրիր էրա անփեր չուսկը պըռծընիր, նոր մեռնիր: Չուսկը մնաց քից կախ (պերք է ասելք՝ թիզը մնաց չափից կախ): Հըմի էլու չռսկի գերը որ գա կրանելու, ես ի՞նչ պաղասխան լրամ:

Սիրելի կորուսու սգացող կինն աղաչում է հանգուցյալ ամուսնուն վեր կենալ, իրեն մենակ չթողնել, հիշում է լավ ու վատ օրերը: Եվ այս ամենը, բնականաբար ներկայացվում է հանպատրաստից, երբեմն անկապ արտաքերված խոսքերով, որոնք տպավորվում են ներկաների հիշողություններում, իսկ հետագայում նրանց կողմից տարածվում են՝ վերածվելով անեկդոտների:

Գրառված զվարճապատումներից մեկում որբացող կինն այս ամենը թվարկելուց հետո չի մոռանում նաև ամուսնու երաժշտական գործիքը՝ բլուզը, որի սխալ արտաքերելը ներկա գտնվողների կողմից ընկալվում է այլ տեսանկյունից և դառնում ծիծառի պատճառ. «Մեռնեմ քեզի, մեռնեմ քո բլուզին: Առանց ծեզի ի՞նալ կապրեմ»:

Ծնողի կորուսու ծանր տանող, որբացող քոյրերը փորձում են գովել ննջեցյալ հորը՝ համեմատելով նրան քաղցրելենի հետ:

- Մեր պապան շակր քաղցր էր, իսկական շոկոլադ՝ պապա ջան:

- Չէ՛, քոյրիկ, - ընդհատում է քոյրը, - մի՛ ասա շոկոլադ: Շոկոլադն ուսում ես, շուրջ վերջանում ա: Մեր պապան իսկական ծծովի կանֆետ էր: Ասա՛ իմ ծծովի՛ պապա ջան, ինչքան ծծնը, չես խըլըսի:

Տասնամյակներ առաջ, երբ գագավորված ըմպելիքների տեսականին սահմանափակ էր և նոր էին ի հայտ եկել «պեպսի կոլա», «կոկա կոլա» ըմպելիքները, որանք թաղման սեղանին դնելը համավում էր ճոխություն, շըեղություն, և ներկա գտնվողը, ընդգծելու համար այդ առատությունն ու ճոխությունը, շեշտում է. «Ընենց թաղում էր, մինչև պեսի-կոլ (այսինքն՝ պեպսի կոլա) էլ կար»: Եվ հետաքրքիր է, որ այս պատմությանը տեղյակները համապատասխան իրավիճակներում վերոհիշյալ խոսքն օգտագործում են որպես դարձվածք: Այս զվարճախոսությունը իմաստով

գրեթե նոյնանում է Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում տարածված այն զվարճախոսության հետ, ըստ որի, հերոսը, խոսելով թաղման ճոխության մասին, շեշտում է. «Էնենց թաղում էր, որ մեռեն էրկու դեղ էին դրե»:

Հնագոյն հավատալիքի համաձայն՝ մարդը մահվանից հետո էլ կարիք ունի այն ամենի, ինչ օգտագործել և ունեցել է այս լյանքում:

Մեր օրերում դեռ պահպանվում են այս հնագոյն հավատալիքների մնացուկները, և կապված մարդու պահանջների, գրաղմունքի հետ՝ ննջեցյալի հետ դնում են այնպիսի առարկաներ, որոնց հետ կապված է եղել տերը, կամ ինչի անհրաժեշտությունը զգացել է կենդանության օրոր:

Գրառված զվարճապատումներից մեկում, երբ կինը առաջարկում է հանգուցյալ ամուսնու հետ դնել իր սիրելի երաժշտական գործիքը՝ գուտնան, միամիտ քոյրը, որի ամուսինը մահացած էր, վախենալով ամուսնու վերադարձից, արգելում է՝ ասելով. «Ախճի՛, մեր գերեզմանները ձերուն մոդիկ ա, կընըվագա, ձենից մեր գոռքագոռ հելուկը կըզարթնի՛: Գործ չունես, թո գուտնեն էլ չըդընեն»:

Դեռևս երեք – չորս տասնամյակ առաջ Գավառ քաղաքում և տարածաշրջանի համայնքներում գերեզմանոց տանող ճանապարհին ննջեցյալի մոտ հարազատներն ու հարևանները իբրև հարգանքի տուրք, ողորմաթաս խմելու նպատակով երկու սեղան են դուրս հանել. մեկը՝ բազմատեսակ ոտելիքներով, մյուսը՝ հանգուցյալի դին դնելու համար: Եվ ամեն «կանգառին» դին դրել են գորգով ծածկված սեղանին, իսկ իրենք «օղորմաթաս» խմել: Բնականաբար, այս սովորույթը ճոխացվել է՝ դառնալով անեկդոտի հորինման պատճառ, որն իրականության հետ իհարկե կապ չունի: Այսպես, մեկի «աղեն» մեռնում է: Թաղման թափորի մասնակիցները այս հարևանի, այն բարեկամի տան մոտով անցնելիս «աղեի» հոգու հանգստության համար խմում են: Մինչև հասնում են գերեզմանոց, իրար զարմացած հարցնում են, թե «դո՞ր աղեն»: Հավաքվում են և փորձում հիշել.

- Վարդի դռան դեմք խըմանք, աղեն խեղնե՞րը էր:
- Խեղները էր,- ասում են:
- Գարսոյի դրոան դեմք խըմանք, խեղնե՞րը էր:
- Խեղները էր:

Այդպես առաջ գնալով՝ վերջապես գտնում են «աղեին» և հանձնում հոդին:

Ինչպես արդեն նշել ենք, թաղումից հետո գերեզմանոցում արարողակարգի մասնակիցները, տվյալ դեպքում միայն տղամարդիկ, մոտենում են ննջեցյալի մոտ ազգականներին, սեղմում նրանց ձեռքը և միխթարում: Ըստ տեղական խոսվածքի՝ մոտ ազգականները կոչվում են «ձեռք վերցնողներ» մասնակիցները՝ «ձեռք տվողներ», երևույթը՝ «ձեռք տալ»: Այս առումով ծիծառ է հարուցում միամիտ երիտասարդի հարցը, թե ի՞նչ են ասում «ձեռք տալուց», և վարպետի՝ կատակով տված պատասխանը, թե՝ «Ըլուն խանեք, ընձի դրեք», երիտասարդը լուրջ է ընդունում և «ձեռք տալիս» կրկնում է այդ խոսքերը:

Գավառում թաղման արարողակարգի պարտադիր տարրերից է նվազածուներ, երգիշներ բերելը և փող տալով՝ գերեզմանոցում նվագ կամ երգ պատվիրելը: Եվ ահա, քյավացիներից մեկը՝ Վարչամը, գերեզմանոցում մի քանի բաժակ խմելուց հետո սկսում է գրպանի փողերը մեկ-մեկ տալ նվազողներին: Հանկարծ ձեռքը տանում և ծոցագրպանից հանում է կապոցվ «կարմիր տասնոցները»:

-Սալրանեն ասումա՛ հրմա էսենց դասպով իսա՛ն ու գու՛ր:

Նվազողը՝ Բախսիկի Հայրիկը, լսում ու ասում է.

-Տղա՛ ջան, որ սականեն ասում ա, մեկ-մեկ էլ սականին լրսա՛:

Գավառում տարածված սովորույթի համաճայն՝ դրսից (օտար երկրից, մայրաքաղաքից և այլն) եկած ազգականի, ծանրթի հետ ուստիիքի բաժին են դնում (բրիչա): Եվ քյավառեցու համար լրացուցիչ մտահոգություն է դրսից եկածի՝ հոգեհացի՝ քելեխի սեղանից չօգվելը, կամ առավել ևս կրկնակի դարդ է նրա չխմելը. «Գիւա թե (իբր թե) մեր դառդը մեզի քիչա. դու էլ էկե խասեր ես (հասնել) ըստե ու չես խըմում», - ասում է մայրաքաղաքից եկած ազգականին:

Քյավառեցուն տրված այն հարցին, թե ինչո՞վ է թաղումը տարբերվում հարսանիքից, զարմացած պատասխանում է.

- Վա՛հ, բան ասիր, թաղման վախսը մե խորի պակաս ա խմում:

Սուանձնակի նշանակություն ունի հիշատակի շիրիմ ստեղծելը և այդ նպատակով հանգույցայի գերեզմանին քար քաշելը, գերեզմանաքարերը դիմապատկերով, հանգույցայի ապրած կյանքին ու գործունեությանը առնչվող զանազան պատկեր-խորհրդանշիչներով հավերժացնելը:

Ժողովրդի մեջ լայն տարածում ունի քյավառեցու մահվան պատճառը նրա գերեզմանաքարի վրա նշելը և դրա հետ կապված՝ զանազան զվարճախոսություններ հորինելը, ինչպես օրինակ՝ «Խըմուկ-մեռուկ», «Չըխըմուկ-մեռուկ», «Չըխըմուկ-կըսկըծու մեռուկ»:

Շատերի անդմամբ՝ Գավառի գերեզմանատան տապանաքարերից մեկի վրա գրված է. «Անց՛րդ, կներես, որ չեմ կանա հետըդ խմեմ»: Մեզ, հիարկե, չհաջողվեց գտնել այդ տապանաքարը, բայց հանդիպեցինք գերեզմանաքարերի՝ ողու շների ու բաժակների պատկերներով (նկարների օրինակները տե՛ս ստորև):

Այսպիսով, թաղման տարբեր ձևերն ու ձիսական արարողությունները՝ կապված մահվան և հանդերձալ կյանքի պատկերացումների հետ, բոլոր ժամանակներում էլ մեծ դեր են ունեցել ժողովրդի կյանքում ու կենցաղում՝ մեծապես ազդելով մարդկանց սովորույթների ու մտածելակերպի վրա:

Ժողովրդի աշխարհայացքի զարգացման ու տնտեսական մեծ տեղաշարժերի հետևանքով թեև փոխվել են նաև այս ձիսակարգի արարողությունների բնույթն ու տեսքը, բայց չի կորել էական բովանդակությունն ու նշանակությունը: Իսկ ժողովրդի կենսակինդ ոգին և ստեղծագործ միտքը, հարմարվելով նոր ժամանակների պահանջներին, շարունակում են սրամտությամբ արձագանքել կենցաղային տարբեր

իրավիճակներին, որի արդյունքում ստեղծվում ու դեռ ստեղծվելու են իրավիճակային նոր զվարճապատում- զվարճախոսություններ:



### **Օգտագործված գրականություն**

1. «Ազգագրական հանդես», գիրք XVI, Թիֆլիս, 1907, էջ 9-65:
2. Բեղիրյան Պ.Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, «ԵՊՀ հրատ.», 2011, էջ 763:
3. Հարությունյան Ս.Բ., Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Երևան, «Մոլոխ» հրատ., 2001, 57 էջ:
4. Ղուջյան Լ. Խ., Դաշտային ազգագրական և բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:

# FUNERAL RITE IN THE TERRITORY OF GAVAR AND ITS REFLECTION IN GAGS AND GIGGLES

GHREJYAN LUSINE

*PhD in Philology, Associate Professor,  
GSU Lecturer*

The funeral-obit, which is unique in the family ritual system, is distinguished by the preservation of ancient traditions: it contains many unique elements of life, lifestyle, habits and perceptions of the Armenian people. In Gavar it somewhat differs from traditional national rituals (square memorial meals, organization of consolation service on the next day after burial, serving "Khash" on the seventh day after burial, the fifteenth-day funeral reception, etc.).

Over time, people's outlook changes, as well as economic changes occur, as a result of which the nature and appearance of these ceremonies change, whereas their content and meaning remain.

However, irrespective of everything, the creative potential of the people responding to various situations continues to create new jokes and anecdotes.

**Keywords:** *Territory of Gavar, funeral rite, funeral reception, grave clothes, deceased, gags and giggles.*

## ПОХОРОННЫЙ ОБРЯД В ГАВАРСКОМ РЕГИОНЕ И ЕГО ОТРАЖЕНИЕ В АНЕКДОТАХ И ПРИБАУТКАХ

КРЕДЖЯН ЛУСИНЕ

*Кандидат филологических наук, доцент,  
Преподаватель ГГУ*

Погребально-поминальный обряд, занимающий своеобразное место в системе семейно-бытовых обрядов, отличающийся сохранением древнейших обычаяев, включает в себя множество уникальных элементов жизни и быта, обычаяев и представлений человека.

В Гаваре он несколько отличается от принятых традиционных национальных ритуалов (обильная поминальная трапеза на кладбище, организация поминок на следующий день после захоронения, в некоторых деревнях после семи дней трапеза хашем, поминки на пятнадцать дней и т. д.).

Со временем меняется мировоззрение народа, происходят экономические сдвиги в результате чего меняется характер и форма этих церемоний, но их содержание и значение сохраняется.

Но, независимо от всего, творческий потенциал народа, реагируя на различные ситуации, продолжает создавать новые прибаутки и анекдоты.

**Ключевые слова:** Гаварский регион, погребальный обряд, поминки, саван, усопший, анекдот, прибаутки.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.05.2020թ.:

Հոդվածը գրախոսվել է 21.06.2020թ.: